

ԴԵՊԻ ՄԱՔԻՆԵՍՑ ՎԱՆՔ¹⁾

Օձաբերդից երկու վերստ անցնելուց, մօտենում ենք Սեւանի հարաւային ծայրին:

Սևանը խաղաղ էր, ընկած ինչաէս փիրուզագոյն ապակի: Ագի մօտ ընկած էր հինաւուրց մի նաւակ: Այդ ձկնորսներինն էր, նորանք էլ այդտեղ էին և բաւական քանակութեամբ ափ էին հանել հրաշալի իշխաններն ու զեղարքունիքը: Այդ համեղ ձկներից մեր պաշարի համար ի հարկէ զզլացանք վերցնել: Այդ ձուկը իշխան չէ, այլ թագաւոր, բոլոր ձկների թագաւոր:

Այդտեղ, ճի եզրին, հրուանդանի պէս մի տեղ՝ ընկած է մի առանաժոտ բուրք: Բլրի կրծքից դէպի լիճը, ջրից երկու արշին բարձրութեան վերայ դուրս է ցցուած մի ժայռ, որի ճակատին արշին ու կէս երկայնութեամբ և մի արշին լայնութեամբ քարի վերայ փորագրուած է մի ամբողջ երես ընեռագիր արձանագրութիւն: Քարի երեսն, ուր զետեղուած է բեւուագիրը, նայում է դէպի ջուրը, այնպէս որ տեսնելու համար նաւակ պիտի նստել և հիւսիսային կողմից ջրի երեսով մօտենալ նորան:

Քարը տեսանք, երկու վերստ էլ ճանապարհ կտրեցինք հասանք Ալըշալու գիւղը: Այդտեղ իշխանք տեղոյն Տէր-Գէորգի տանը: Այդ քահանան իւր առաջին իսկ շարժուածքով և ընդունելութեան քաղաքավարի ու վայելուչ ձեւրով ապացուցեց, որ աշխարհ տեսած մարդ է:

Քարեներից յետոյ նախ մտանք ներս՝ տէր հօր երկու ձեռագիր աւետարանը տեսնելու:

Ընդարձակ խրճիթի սևապատ առաստաղի տակ՝ թոնը շուրջը նստած կանայք հաց էին թխում: Հացի անոյշ ու կեն-

1) Տես «Լումայ» № 5 1904:

սալի բուրմունքը համակել էր խրճիթի բոլոր անկիւնները:

Ով կերել է Հայաստանի թաժայ հացը՝ պանրի և կանաչնենի հետ, նա անզուշտ կդնահատէ Հայաստանի հողը: Հայկական գիւղերի սովորութեամբ ամսական երկու անդամ են հաց թխում, — լաւաշ հաց, թղթերի բարսկութեամբ: Չորացնելուց և ապա մի անգամ թքնելուց, հացերը աւելի են համեղանում: Հացի հետ էլ համեն է հայի ձմերային բոլոր պայարները: Խեցիներում պահուած իւղը, պանիրը, զանազան թթուեղինները, ապա քսակների բրինձը, ցորենը, ձաւարը, լոբին, սիսեռը և այլ և այլ բուսեղինները: Այդ բոլորը հայ գիւղացին իւր հողի վերայ ինքն է արտադրում: Հայ գիւղացու օգնականը իւր կինն է, կինը միշտ իւր ամուսնու հետ հաւասար գործում է և արտում և հանդում և այգում և բանջարանոցում, ապա լրացնում է տան բոլոր պակասութիւնները, երեխաններն էլ ինքը պահում, ինքը մեծացնում իւր ստինքին, իւր անարատ կաթուլ:

Հայի սիրելի պարագմունքը երկրագործութիւնն է եղել և այսօր էլ երկրագործութիւնն է:

Խրճի պատերից մէկում շինուած է փոքրիկ պահարան, որտեղ Տէր Գէորգը պահում է երկու ձեռազիր աւետարանները: Մէկը նորանցից նոր գործ է. իսկ միւսը 1425 թուականն ունի վերան: Գիրքը զարդարուած է բազմաթիւ պատկերներով, նկարուած շատ գեղեցիկ ներկերով և զլիաւորապէս ուկէզօ. ծուած, որի փայլը տակաւին մնացել է անվնասու:

Այդ աւետարաններն էլ Օձաքերդի աւետարանի պէս բազմաթիւ ուխտաւորներ ունին, սակայն մենք որքուն ճանաշեցինք տէր-Գէորգին, նա չի մերժի իւր աւետարանները Մայր Աթոռ ուղարկելու, կամ գոնէ գիւղի եկեղեցում տեղաւորելու: Աւետարանը եթէ արդէն ունի որոշ ուխտաւորներ, ուրեմն նորապատշաճաւոր տեղը եկեղեցին է: Ուխտը յարմար է միայն եկեղեցում կատարել:

Ալշալուն էլ հայկական գիւղ է: Նւ ինչպէս այդ երկրի բոլոր գիւղերում, այդտեղ ևս ժողովուրդը պարապում է սոսկ երկրագործութեամբ: Ամենուրեք աչքի է ընկնում բուսականութեան բացակայութիւնը: Սակայն հասարակ այգեգործական կուլտուրայի մասին ամեննին գաղափար չունին այդ երկրի մարդիկ: Խաղողը հօ կատարեալ ցնորդ է դորանց համար: Գինի չկայ ոչ մի տեղ: Ճողովուրդը զլիաւորապէս գործ է ածում

օղի և անրախտաբար սկսում է կամաց-կամաց նուիրուել օղիին:
Ալլալուի տէր Գէորգն էլ նահապետական մարդ է: Այդ
օրն իւր այդին նա Արքահամի վրան էր դարձրել, և այդտեղ
վայելչութեամբ հիւրասիրուելով, ուղեկիցներիս հետ, տէր-Գէ-
որգի առաջնորդութեամբ դիմեցինք դէպի Վանէ-Վանից վան-
քը, որ ընկած էր Ալլալուից հեռու, մի վերստաչափ ճանա-
պարհի վերայ:

Վանէվանից վանքը շինուած է մի բլրի ստորոտում, գե-
տակի ափին: Ինչպէս երևում է այդ կողմի վանքերը—գրեթէ
բոլորն էլ շինուած են Ս. Հոկիսիմէի վանքի ճարտարապետու-
թեամբ: Վանէվանից վանքն էլ Ս. Հոկիսիմէի փոքրադոյն մօ-
դելն է, չորս կիսակողոր սեղաններով ու խորաններով և փոքր
ինչ սրածայր կաթուղիկէու:

Վանահայրը—մի ծերունագարդ վարդապետ, որ շատ վա-
ղուց Տաճկաստանից եկել-աւելաւորուել է այդտեղ, վանքի ներ-
ու զարդարել է ուղիղ երեխայական էշխ ու հաւէսով:

Պատերի վերայ կախուած են զանազան պատկերներ, թէ-
պէս և բոլորը կատակ վերայ, հայկական ճաշակով նկարուած: Ա-
ստա սպիտակ եղէզնից մոմեր է ձևացրել և շաբքով պնտացրել
պատկերների առաջ: Այս և այն անկիւնումն էլ զետեղել է մի
շարք փայտէ խաչեր և քօղերով ու ծռակերով զարդարել:

Գլխաւորն այն է, որ այդ զառամեալ, ծերութեան հա-
սած վարդապետը դեռ այնքան տենչանք ունի սրտում, գեր-
այնքան եռանդ կայ: Քառնուհինդ, երեսուն տարեկան վար-
դապետներ կան, որոնք կատարեալ մթերք են ննիկայտնում:

Վանքի պատերի վերայ կան արձանագրութիւններ, որոնք
մի հետաքրքիր վկայութիւն չունին: Հին արձանագրու-
թիւնները աեղի են առւել նորերին: Նորերն էլ վանքի վե-
րանորսողների, զանազան կարկատան անողների և շատ
քարերի վերայ իսկ այցելողների անսւններն ու տարէթուերն
են վկայում:

Սակայն ո՞քան միսիթարական է վանքի մէջ մի տէր,
մի հսկող տեսնելը: Եւ Վանէ Վանից վանքը ուրիշ շատ ան-
տէր, անխնամ վանքերի պէս մի գերեզման չէ ներկայացնումն
Հայոց վանքերն առանց բացառութեան, բոլորը պտղաբեր շը-
ջակագը ունին: Ի՞նչ դրութեան կհասնեն նորանք, եթէ միան-
գամայն հասնեն տրտմագին մենաւորութեան:

Վանէվանից վանքի վանահայրը մի գեղեցիկ ըանջարա-

նոց է շինել վանքի առաջ, որ մի խրատական օրինակ է Բայտ-
ղէտի գիւղացիներին, որոնք առարկում են թէ օդը ցրտագին
է, բանջար չի բանում իրանց երկրում, ծառ չի մեծանում
և այլն:

Վանէվանից վանքից մեր ճանապարհը շարունակեցինք
դէպի Մաքենեաց վանք:

Ալբալուից դէպի Մաքենեաց վանք գնալու համար մեր
ճանապարհը շատ անտանելի եղաւ: Մի նեղ կածան, մի արա-
հետ չկայ, որպէսզի չփոթուենք, սար ու ձոր չընկնենք: Պ.
Մնացականն էլ Օձարերդից մի առաջնորդ էր վերցրել, որը ոչ
ճանապարհ գիտէր, ոչ էլ առաջնորդելու շնորհը ունէր և որն
աւելի քան նեղութիւններ պատճառեց:

Հարցնում եմ այդ այլասեռուած գիւղացուն: Մաքե-
նեաց վանքի մօտ կայ որ և է գիւղ:

— Այն, կայ, թուրքի գիւղ է:

— Թող թուրքի լինի, վերջապէս այդ գիւղի մարդիկ հա-
զորդակցութիւն ունին միւսների հետ:

— Այն, ունին:

— Հապա ուր է այն ճանապարհը, որ անշուշտ մի նեղ
կածան կլինի, որ տանէր դէպի վանքը.

Զուլուսի նման զիւղացին ոչինչ չի խօսում: Ձորից բարձ-
րանում դէպի վիր, դէպի ապառաժոտ ըլուրը և նորից
իջնում ձոր, անցնում թիւրքի ու մացառների արանքը: Եւ
մենք ճարանատեալ հետևում ենք նորան: Պալսուտինը որոնող
սար ու ձոր ընկած խաչակիրներ ենք գարձել:

Վերջապէս, երկար նեղութիւններ կրելով, հազիւ գտանք
ճանապարհը, որով մօտ երկի վերսա անցնելուց, երևաց վան-
քի խաչապսակ կաթուղիկէն:

Վանքին կից գիւղի բնակիչները թիւրքեր են: Հողը վան-
քինն է, բայց անցել է թիւրք գիւղացիներին, որոնք և այսօր
շրջապատել են քրիստոնէական օծեալ տաճարը, որ այդտեղ
մենմիայնակ առես գերուած ու թշնամիներով պաշտօւած լինի
և որ կարծես արտօսրագին ձայնով ասում է քրիստոնեայ այ-
ցելուին: Շիրկեցէք ինձ, ես մենակ եմ, անտէր մաշնում եմ, որ-
դոց կարօտով տոշորւաւմ:

Առաջին իսկ տալաւրութիւնը ծանր էր և միշտ ծանր է
մնաց: Առկայն ինչ դիրք ունի: Ասես փոքրիկ քերդ լինի: Կանգ.

նոծ է բարձր, ապառաժութ բլրի վերայ, շրջապատուած քարաշէն պարիսպներով:

Պարսպի դուռը հարաւային կողմիցն է. Դուռն բանալին գտնուում է թուրք զիւղում ապրող միակ հայ վաճառականի մօտ, որին իմաց տրուեց, եկաւ դուռը բացաւ.

Կանաչ խոտը կէս արշինաչափ բարձրութեամբ ծածկել է ամբողջ բակը: Փոքրիկ գետակը հարաւային պատի տակից սողալով, վանքի արևելեան պատի քարերը գուրգուրելով, մշտամուռնչ ուխտը կարկաչելով, սահում-թափուում էր դուրս հիւսիսային պատի տակով: Լուռ է վանքը, լուռ է չորս կողմը, լուռթիւնը թախծալի, արցունքով լեցուն:

Մաքենեաց' վանքն ունեցել է իւր բարձր հոչակը, ունեցել է մեծանուն միարաններ: Սյդտեղ է ապրել Մաշտոցը, այդտեղ սկսել իւր զիրքը և ապա շարունակել Սևանում:

Այդ վանքն է եղել Վահան Գողթնացու ճգնարանը, այդտեղից է նա դիտել հայրենեաց շէն ու անշէն անկիւնները, այդտեղ իսկ որոշել ապրել աւետարանի քաղցրագոյն վարդապետութեան համար¹⁾:

Նա դեռ տասնութ տարեկան պատանի, արաբական պատում մեծացած, շքով ու պէտանքով շրջապատուած, սակայն մի ծանր բնազգուումով շղթայուած է եղել հոգին: Նա հանգիստ չէ զգացել, իմանալով, որ ինքը քրիստոնեայ է, մի անքախտ աշխարհի իշխան և որ մահմեդական դարձնելով իրան, սարկացրել են, ոտքի տակ տուել այն հաւատը, որով ապրել են իւր սուրբ նախնիք, ապականել այն խանձարուը, որի ծալքերում ծնուել է և տրորել այն աւաղանը, որի մէջ մէրտուել է: Եւ այդ սիրտ կրծող խիթճը խլում է նորա հոգու անդորրը, նորա սրտի խաղաղութիւնը, ուստի և նա հայրենիք գնալու դրական վճիռը յայտնուում է Արդըլմելիք ամիրային. ու երբ լըսում է նորա խօսքը թէ՝ նա շէն հայրենիք չունի, թէ Գողթն ամբողջովին աւերակների կոյտեր են, այն ժամանակ նա

¹⁾ Ի դէպ է ասել, որ Մաքենեաց վանքն այցելելու մեր զիկաւոր նպատակն էր տեղն ու տեղը տեսնել ու ծանաչել Վահան Գողթնացու սիրած ու ապրած տեղերը, որ կարեւոր էր մեր «Վահան» Գողթնացից պատմական վէպի համար: Այդ վէպը գրել ենք 1898 թ.: Սակայն առ այժմ չկարողացանք լշու ընծայել ոչ «Հումայում» և ոչ առանձին գրքով:

բացականչում է ռարձակեցէք, որ տեսնեմ զորչափութիւն աւերածոյ երկրին իմոյ հայրենեաց»:

Նւ եկաւ ու տեսաւ, որ յիրավի ամեն անկիւն դարձել է մոխրակոյտ, ամեն անկիւն ամայի: Զկային ոչ բարեշէն քաղաքներ, ոչ գիւղեր, աւաններ, չկային հայրենական պալատներ, ամրոցներ, բայց վանքերը տակաւին կանգուն էին և վանքերումն էին հնչում կորած փառքի ողբը և յաջորդող սերունդին խրախուսող երգը: Վանքերն էին մնացել իրը պատսպարաններն յախուռն թշնամինների յարձակումների դէմ, վանքերումն էին երկրի քաղաքական մինչև իսկ պատերազմական գործերը վճռում, վանքերում էին գլուրանցները և վանքերից էին գղխում գիտութիւն, ուսում, արուեստ, գեղարուեստ Վանքերումն են ապրել մեծացել Մաշտոցներ, Գօշեր, Գաւիժներ, Խղնիկներ և այլք: Վանքերի մէջ են ծնուել նորանց մատեանները, ապա վաճքերից տարածուել ժողովրդի մէջ: Վանքերը պատնէններ են եղել և ժողովրդին մահ սպառնացող սովոր դէմ, վանականներն են ամոքել աղքատի վիշտը, թշուառի լացն ու կոծը: Նորանք հացի շտեմարաններ են պահել որոնցից օգտուել է ժողովուրդը: Վանքերում պահուել են ջուկհակներ, ոսաւայներ, ձիթահաններ, ճախարակներ, մինչև իսկ երկաթէ զանազան գործիքներ:

Մաքենեաց վանքի վանահայրերը կարծես խօսել են իւրաքանչիւր ծաղկի ու բոյսի հետ: Աւանդութեամբ պատմում են, որ նորանք զանազան ծաղկիկներից թէ ներկեր են պատրաստել, թէ զանազան հեղուկներ՝ հիւանդների համար:

Մաքենեաց վանքը հարուստ է եղել ոչխարների հօտով: Բուրդ, պանիր, իւղ նորանք արտադրել են ոչ միայն Գեղարքունիքաց երկրի այս ու այն կողմերին, այլ հասցըել են մինչև Գողթն ու լրջակայըը: Վանականները ձմեռ ժամանակ մաքիի մորթուց կարած կազոց են հագել, դորա համար էլ ժողովուրդը նորանց Մաքենեաց է անուանել, իսկ լրջակայ գաւառն այս ժամանակ կոչուել է Մաքենիք:

Վանքի արեմտեան կողմից լնկած է խոր ձոր, որի միջով հոսում է ջրառատ գետը, որ հնումը կոչուել է Մաքենեաց գետ, այժմ թուրքերէն՝ ինչպէս վանքին Լըզլ-վանք, այսինքն Ըսկե վանք, այնպէս էլ գետն են անուանում: Լըզլ-չայ, այսինքն Ըսկե գետ:

Զորի միւս կողմը մի սքանչելի բլուր է, տափարակ գլխով,

սրտեղից երևում է Գեղարքունեաց ամբողջ երկրը, իւր կապոյտ, փիրուզավառ գմբէթով.

Մաքենեաց լանքն իւր չորս, ընդարձակ, կիսակողոր պատերով և չորս անկիւնաւոր խորաններով ու իւր ամբողջ յատակագծով պահած չէ Ս. Հռոիփսիմէի վանքից, Պահասութիւնը միայն իւր անուշադիր մնացած դրութիւնն է,—ողբալի դրութիւն, որ ապուշ է կրթում մեզ:

Պատերի վերայ շատ հին արձանագրութիւններ չկան: Միքանի կցկառուր գրութիւններ վկայում են, որ գեռ երկու հարիւր տարի առաջ այստեղ ապրել է մի ամբողջ միաբանութիւն, այստեղ կատարուել են քահանաների և վարդապետների ձեռնադրութիւններ:

Կանգնած եմ ներսում, երբեմն հոչակառոր վանքի կամարների տակ: Սուաստաղից տասնագոյն կաթիւններ են գլուխում, կարծես մեր աշխից թափուող կաթիւններին կցորդելու: Կաթուղիկէի տանիքը քանդուում է և անշուշտ մի ամբողջով վին պիտի վլուի: Զախակոյմեան խորանում զետեղուած է մի գերեզման, որի վերայ ընկած քարին չկայ և ոչ մի հատ տառ, այց աւանդութեամբ ասում են իրը թէ այդ Սողոմոն եպիսկոպոսի գերեզմանն է:

Սողոմոն եպիսկոպոսը այդտեղ երկար տարիներ վանահայրութիւն է արել ութերորդ դարի սկզբներում,

Վանքի բակում, արևելեան կողմում ընկած են մի շարք խուցեր, որոնք նոյնպէս թափուում են և, ինչ ասել է հարկաւոր, որ անտէր դրութեան մէջ մնալով, ամբողջովին կփուին և իսպառ աւերակ կդառնան:

Սքանչելի տեսարաններ կան արևմտեան կողմից: Պարիսպները կանգնած են ուղիղ ժայռերի եզրերին, որի ստորոտում վշշալով, վշշալով, դարերով ընկած ապառաժների հետ մրցեսով, սահում է Ուկի գետը, պաղպանուն կոհակները պար ըըսնած՝ առաջ է զլորում ու իմ հայեացքն առնելով, կարծես շնչում է.

Կտը ժամանակ, որ ես էլ

Եքեղազարդ հարսի պէս

Հազար ու բիւր պէտքանքով

Փախչում էի ափերէս:

Եւ կարծես նա նկատում է այն տենչավառ զեղմունքը

որ իւր կոհակներից ոչ պակաս փրփռում են և կրծում իմ սըր. տի թելերը:

Այս սահում է Ռակի գետը, ալիքները զարնում քարերին, սահում դէպ առաջ, դէպի ձորեր, դէպ անդունդ: Խսկ վանքը, Մաքենեաց վանքը մենակ, դառն հայեացքն ուղղած երկնքին, թախիծը ճակատին, Վահան է յիշում, Գողթնացին Վահան, Մաշտոց է ողբում և տիրամած՝ մնում կանգնած՝ նոյն սգի, նոյն ողբի, նոյն լացի մէջ:

Այդ դառն մտքերի, այդ մելանիչ պատկերների ծալքերն էի մտել, յանկարծ լսուեց Լեռնի ձայնը:—Կանչում է ինձ:

Ահա. արտասուացս կաթիլները յանձնում եմ քո յորձանքուներին, ով գետ, բայց ով կատա ինձ մխիթարութիւն:

Լեռնի ձայնը կրկնուեց. Յետ նայեցի:

— Սեղանը պատրաստ է, ասաց նա, ձեզ ենք սպասում:

Սեղան, ճաշ մենաւոր վանքի մօտ... բոպէական կեանք, բոպէական կենդանութիւն... Կիսուենք, սեղան կվայելենք, աշքից թափուող կաթիլներն էլ սառած քարերին կյանձնենք, կդառնանք, կդնանք, բայց քամին չի հաղորդիլ մեզ վանքի գանդատը, վանքի յանդիմանութիւնը և վերջապէս նորա աղեգորով կոծն ու կակիծը:

Նստեցինք ճանաչ, մետաքսանման խոտին, կարկաչուն գետակի մօտ, նստեցինք սեղանի շուրջ, իմ միտքը հին-հին դարերումն էին սաւառնում, իմ աշքի առաջ Գեղամները, Վահաններն ու Մեսրոպ—Մաշտոցներն էին կանգնած:

Մնացինք այդտեղ մինչև արեգակն անցաւ կանաչավառը բրի ետեր և երկնքի խաղաղ ստուերը փռուեց ամենուրեք:

Վերջապէս մեր տիրամարմունջ «մնաս բարևները» շնջացինք, համբոյր տուինք վանքի օծուած պատերին, համբոյր Վահանի ձեռովի շօշափած տեղերին, համբոյր սուրբ հարանց ձեռովի կերտած քարերին, «մնաք բարե» դառնամրմունջ ջըրերին, տրտմախոն բլուրներին, տրտմածաւալ դաշտերին, հեծանք ձիերը, իջանք դէպի ձոր, դէպի ճանապարհ:

Իջում եմ, հայեացքս դէպի տիրահայեաց վանքը և այդպէս մինչև նա էլ անհետացաւ:

Անցանք կածաններն ու առապարներն, Նլըշալուն թողեցինք մի կողմ, հասանք Սեան, որի խռովայոյզ ալիքները կատաղել էին, գոռում-մոնչում էին և բարձրաշչունչ հողմների

հետ կարծես գանդատ, տրտունջ ու յանդիմանութիւն էին նեռում մեզ:

Օձաբերդն էլ հասնելով, թողեցինք և գիշերելու համար դիմեցինք դէպի Դիօրիակ. Բուլայի գիւղը:

Անա լսուեց հեռուում ծիծեռնակի վերջալոյսի մողեգին, ահա դաշտից տուն դառնող նախիրի համերգը, ահա գիւղական երեկոն իւր բոլոր քաղցրութեամբ:

Նրկնքը մռայլուել էր: Անձրե էր սպասուում: Իսկ Սևանի ջրերը տակաւին չեին լոռում: Իրանց ահեղ մոնկոցով կարծես գալիք գիշերն են նշաւակում, մրրկալից թխպերը վախսցնում: Որոտի ձայնը լսուեց, հեռուում Սևանի եղրին ընկած հորիզոնում փայլատակեց կայծակը և ամպրոպը կրկնելուն պէս անձրի խորար կաթինելն սկսուցին թափուել: Մենք արդէն բարձրանում էինք բլուրն ի վեր և անցնում բնութեան ժմորի արանքուի: Փայլակը նորից շողաց, ամպերի գրկախառնութիւնն սկսուեց և ապա նորանց կարօտի արտասուքն առատօրէն տեղաց մեզ վերայ:

Բարեբախտաբար անձրել չսաստկացած՝ հասանք Գեօդակ-Բուլայի, որ թարգմանուում է Կարճ-աղբիւր:

Ի՞նչն է կարճ, ջրի խողովակը թէ նորա սկզբից մինչև գիւղն ընկած տարածութիւնը. Զիմացանք: Կարճ է կոչում, կարճ էլ ընդունեցինք և գնացինք այլտեղ ու ապաստանեցինք Մեացականի բարեկամի տանը:

Մտանք ներս. մի մեծ սենեակ, որի մի անկիւնում կուտակուած էր ցորեն, իսկ միւս անկիւնում դրած էր մի լայնարձակ թախտ, որ որոշուեց մեզ համար:

Ի՞նչ հնար ունէինք, պիտի մնայինք: Անձրեն էլ սաստկացւ, էլ ոչինչ չեինք կարող անել: Գիտէի, որ գիշերը մկների հակերզը պիտի լսէի, գիտէի որ այդ գիշերուայ քունն էլ լէտան պիտի պանայ, սակայն ուր գնալ: Պէտք է խոնարհուել հանգամանքներին: Մարդը հանգամանքի ծառայ է: Սակայն չեմ մոռանում, որ տանաէրը ամեն կերպ աշխատում էր իւր հիւրասիրութիւնը կատարեալ անել:

Գիշերն իսպառ տիրեց: Ուղեկիցներս փափուկ անկողին-ներում արդէն անցել էին բախտաւոր աշխարհներ:

Մութ գիշեր էր: Նրկնքը դարձել էր սգւոր. Թէպէտ որոտն ու կայծակը դադրել էին, բայց երկնքի արտասուքը հանդարտ մաղւում էր: Այսուամենայնիւ կենարար էր այդ ար-

տասուքը, վասն զի թեթև երաշտի հոռա էր փչում։ Բարակ սիւգերը մեղմօրէն բաղխում էին պատուհանի շրջանակներին կպցրած թղթերը։—Լուր էին հաղորդում, թէ նոր-նոր արկածներ էին պատում, Սևանից էին գալիս, թէ Մաքենեաց վանքից, չէին ասում։ Վերջապէս պատուհանի թուղթը պատռեցին, ներս մտան, շփեցին ճակատս և ես ամեն ինչ հասկացայ։

Առաւոտը գեղեցիկ էր։ Մուայլու ու փոթորկալից գիշերը տեղի էր տուել պարզ երկնքին և գեղածիծաղ, պայծառ առաւոտեան։

Արշալոյսի երփներանդ ճաճանչները տարածուել էին շաղաթաթախ մարմանդներին, որ կարծես երկնքից ասաղերը թափուել ու ցըռւել էին նորանց վերայ։

Գեղամայ սիրասնունդ հայրենիքումն ենք, ընութեան հրաշագեղ ծոցերից մէկում։ Եւ թւում է թէ բնութեան բոլոր տարերքը խօսում են մեզ հետ։ Աղրիւրները կարկաջում են, ծառերը ջշում, սիւգերը վզզում, ծաղիկները սօսափում, գետերը վշշում, հեռուում Սևանայ ալիքները մռնչում, լեռներն էլ զեփիւռների միջոցով շնչում, արտոյան ու ծիծառը դայլայլում, հաւերը կանչում, նախիրը բառաշում, ձիերը խրխնջում, ժպտավառ արեն էլ ոսկէ շողերը տարածում։ Ամենքն էլ տենչանք ունին, ամենքն էլ փափագ, ամենքն էլ սէր, յոյս, վիշտ և կարօտ։ Եւ կարծես ամենքն էլ կամենում են, որ մենք էլ մասնակցենք իրանց սրտի գեղմունքին։

Գեօդակ-Բուլաղը թողեցինք և մտանք Սևանի ափին ընկած փոքր ինչ հարթ ճանապարհ։

Գիւղերն անցնելով և թողնելով մի կողմ, գալիս էինք։ Եւ երբ վերջապէս մօտեցանք նրանոս գիւղին, Լևոնը թախանձեց մտնել իրանց մօտ, գիւղը այնտեղ անցկացնել, ապա առաւոտեան՝ հանգստացած՝ ուղևորուել դէպի Ն. Բայազէտ։

Առաջարկն ընդունեցի, մանաւանդ, որ երկու գիշեր չէինք քնել։ Նրկու օր էլ ձիի վերայ անցկացնելուց յետոյ, յիրաւի փոքր ինչ հանդարութիւն էր հարկաւոր։

Արեւ մօտենում էր իւր ննջարանին, որ հասանք դէպի Նրանոս տանող ճանապարհին ընկած հանգրուանը։ Այստեղ էլ փոքր ինչ հանգստացանք, ապա օն դէպի Նրանոս։

Գիւղի ծայրը հասանք և ահա լսուեց եկեղեցու զանգակների սիրամբունջ ղողանջիւնը, որ տանձին քաղցրութեամբ

շարժեց մեր կրօնական զգացմունքը և մենք բնազդմամբ. խաչ հտնեցինք երեսներիս ու մտանք դիւզ:

Երանոսն այդ երկրի բոլոր գիւղերի նման զուրկ է բուսականութիւնից, զուրկ գեթ բնական փոքր ինչ վայելուզ արտաքինից: Գիւղն ունի հարիւր յիսուն տուն, բնակիչ մի եկեղեցի և ոչ մի ուսումնարան:

Լեռն Խանսանամեանցի տանը՝ փարթամ ընթրկից յետոյ գիշերուայ հանդիսան առանք, ապա առաւուեան այցելեցինք մի քանի տեղ ու ճաշից յետոյ վերադարձանք ն. Բայազէտ:

Հետեւեալ օրը կիւրակի էր: Խսկ ես որոշել էի երկուշաբթի անպատճառ զուրս զալ Բայազէտից և ճանապարհս շարունակել դէպի Սևան, ապա Անի ու Շիրակայ բոլոր գաւառը: Մնացականն ու Լեռնը ջերմ ցանկութիւն յայտնեցին ինձ հետ ճանապարհորդելու և որպէս զի իրանց ճանապարհորդական պատրաստութիւնը ժամանակ ունենան տեսնելու, խնդրեցին առ ժամանակ սպասել Սևանում: Երկուշաբթի՝ ժամը 10-ն սրտազին չնորհակալիքս յայտնելով աղնիւ ընտանիքին, ճանապարհս նոյն տանջող սայլակի վելայ շարունակեցի դէպի Սևան:

Ա. ՐԵՍԱՆ ԿԱԾԵՑՈՒՆԻ.